Փետրվարի 21-ին տեղի ունեցավ Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի կարգապահական կոմիտեի հերթական նիստը՝ ՀՖՖ Կարգապահական կոմիտեի նախագահ Ռուբեն Սինոյանի նախագահությամբ՝

ՈՐՈՇՎԵՑ՝

16/02/13թ. «Պոլիտեխնիկ»-«Արմավիր-ֆզ» խաղին «Արմավիր-ֆզ» թիմի ֆուտբոլիստ Հովհաննես Բարսեղյանի հեռացման (նույն խաղում 2 զգուշացում) համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 21-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ որակազրկել 1 խաղով, Արմավիրի քաղաքապետարանի մարզադպրոցին տուգանել 7000 դրամ:

09/02/13թ. «Թալգրիգ-ֆզ»-«Պոլիտեխնիկ» խաղին մարզադաշտում կարգուկանոն չապահովելու համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 20-րդ հոդվածի 10-րդ կետի համաձայն՝ 1 խաղ անցկացնել առանց հանդիսատեսի և մարզադաշտը որակազրկել պայմանական մինչև մրցաշրջանի ավարտը, «Թալ-Գրիգ» ՍՊԸ-ին տուգանել 40000 դրամ: